ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Լիբանանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև բարձրագույն և հետբուհական կրթության որակավորումների փոխադարձաբար ճանաչման մասին

Լիբանանի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

առաջնորդվելով բարձրագույն և հետբուհական կրթության որակավորումների փոխադարձաբար ճանաչման նպատակով կրթության և գիտության ոլորտում համագործակցության մակարդակը բարձրացնելու ցանկությամբ,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Սույն Համաձայնագրի նպատակներով հետևյալ տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

ա. *«բարձրագույն կրթություն»* – հետմիջնակարգ կրթության մակարդակի բոլոր տեսակի ուսումնական դասընթացներ կամ ուսումնական դասընթացների շարք, որոնք ճանաչվում են Կողմի իրավասու մարմնի կողմից՝ որպես տվյալ Կողմի բարձրագույն կրթության համակարգին պատկանող մաս,

բ. *«հետբուհական կրթություն»* - հետբարձրագույն կրթության մակարդակի բոլոր տեսակի ուսումնական դասընթացներ կամ ուսումնական դասընթացների շարք, որոնք ճանաչվում են Կողմի իրավասու մարմնի կողմից՝ որպես տվյալ Կողմի հետբուհական կրթության համակարգին պատկանող մաս,

գ. *«բարձրագույն և հետբուհական կրթության որակավորում»* – ցանկացած աստիճան, դիպլոմ կամ այլ վկայական՝ տրված բարձրագույն կամ հետբուհական կրթության ուսումնական հաստատության կողմից, որը հավաստում է բարձրագույն կամ հետբուհական կրթության ծրագրի հաջող ավարտը,

դ. *«բարձրագույն կամ հետբուհական կրթության ուսումնական հաստատություն»* - հանրային կամ մասնավոր հաստատություն, որը տրամադրում է բարձրագույն կամ հետբուհական կրթություն և ճանաչված է Կողմի իրավասու մարմնի կողմից՝ որպես տվյալ Կողմի բարձրագույն կամ հետբուհական կրթության համակարգին պատկանող մաս,

ե. *«ճանաչում»* – մյուս Կողմի տարածքում շնորհված կրթական որակավորման գնահատման պաշտոնական հաստատում մի Կողմի իրավասու մարմնի կողմից՝ կրթական և (կամ) աշխատանքային գործունեությունից օգտվելու նպատակով,

զ. *«բարձրագույն կամ հետբուհական կրթության հասանելիություն»* – բարձրագույն կամ հետբուհական կրթության ծրագրերին դիմելու և ընդունելության համար դիտարկվելու թեկնածուների իրավունք՝ հիմնվելով միջնակարգ և հետմիջնակարգ կրթության մակարդակին համապատասխան նրանց որակավորումների վրա,

է. *«իրավասու մարմին»* – Լիբանանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն կամ այլ իրավասու մարմիններ, որոնք նշանակվել են Համաձայնագրի Կողմերի կամ նրանց իրավահաջորդների կողմից:

Հոդված 2

Կողմերը փոխանակում են այնպիսի տեղեկատվության, որը վերաբերում է երկու երկրներում առկա որակավորումներին և աստիճաններին՝ հատկապես բարձրագույն կրթության համակարգում, կիրառվող կրեդիտային համակարգին, յուրաքանչյուր աստիճանի համար կրեդիտային տարիների քանակին:

Հոդված 3

Յուրաքանչյուր Կողմ, սույն Համաձայնագրի դրույթների համաձայն, ճանաչում է մյուս Կողմի բարձրագույն և հետբուհական կրթության ուսումնական հաստատությունների կողմից շնորհված՝ բարձրագույն և հետբուհական կրթության որակավորումները: Այնուամենայնիվ, անհատական որակավորումը ինքնաբերաբար ճանաչման ենթակա չէ, այն պետք է գնահատվի և համապատասխանաբար ներդրվի Կողմի կրթական համակարգում:

Հոդված 4

Որակավորումների ճանաչումը դյուրացնելու համար Կողմերը պետք է պարբերաբար փոխանակեն իրենց բարձրագույն կրթության համակարգին պատկանող՝ ճանաչված (հավատարմագրված) ուսումնական հաստատությունների թարմացված ցանկը:

Հոդված 5

Անհատական որակավորման ճանաչումը ենթակա է գնահատման իրավասու ճանաչող մարմնի կողմից: Յուրաքանչյուր Կողմ սահմանում է գնահատման կարգ:

Հոդված 6

Կողմերը բարենպաստ պայմաններ են ստեղծում իրենց ուսանողների և ակադեմիական անձնակազմի փոխանակման համար:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ իրականացման շրջանակներում Կողմերի միջև առաջացած ցանկացած վեճ կարգավորվում է Կողմերի կողմից՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 8

Փոխադարձ համաձայնությամբ Կողմերը կարող են փոփոխություն կատարել սույն Համաձայնագրում: Փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրություններով՝ կազմելով Համաձայնագրի անբաժանելի մաս, և ուժի մեջ են մտնում Համաձայնագրով սահմանված կարգով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից և վավեր է մնում մինչև Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին ծանուցի սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին՝ վեց ամիս առաջ նախօրոք գրավոր ծանուցում ներկայացնելով:

Համաձայնագրի դրույթները վերաբերում են բոլոր նրանց, ովքեր ուսման կամ աշխատանքի հնարավորություն են փնտրում Լիբանանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում՝ մինչև Համաձայնագրի գործողության դադարեցումը:

Կատարված է Բեյրութ քաղաքում, 2012 թվականի նոյեմբերի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ արաբերեն, հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2013 թ. մայիսի 21-ին: